ՀՏԴ 93(=919.81)(56) + 947.25

Doi:10.54503/0135-0536-2024.3-21

ՊՈԼՍԱՀԱՅԵՐԻ ՕԳՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԸ ԵՎ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ (1919–1922 թթ.)*

ՍԻԼՎԱՐԹ ՄԱԼՀԱՍՅԱՆ
(Ստամբուլ)

Բանալի բառեր՝ պոլսահայեր, Հայաստանի առաջին Հանրապետություն, Խորհրդային Հայաստան, պարբերականներ, Կ. Պոլսի հայոց պատրիարքարան, փոխառություն:

Նախաբան

Հայաստանի Հանրապետությունը 1918 թ. հուլիսին Կ. Պոլսում բացեց դիվանագիտական ներկայացուցչություն՝ պոլսահայ Ֆերդինանտ Թախտաջյանի ղեկավարությամբ, որի նստավայրը գտնվել է «Թոքաթլյան» պանդոկում[1]*: Նա պաշտոնավարել է մինչև Հայաստանի առաջին Հանրապետության անկումը: Այն կարևոր գործունեություն է ունեցել ի նպաստ նորաստեղծ հանրապետության: Թախտաջյանը, գործելով բավական բարդ պայմաններում, կարողացել է ՀՀ ղեկավարությանը փոխանցել կարևոր տեղեկություններ Թուրքիայում տեղի ունեցող իրադարձությունների վերաբերյալ, ինչպես նաև միջնորդ է եղել ՀՀ-ում և դրսում գործող ներկայացուցչությունների միջև*[2]*:*

Հայաստանի առաջին Հանրապետությունն ու պոլսահայերը

Պոլսահայերն առաջին իսկ օրվանից մեծ ոգևորությամբ են ընդունել ՀՀ-ի հռչակումը, բայց չեն կարողացել բացեիբաց արտահայտել իրենց «զգացմունքները»: Երբ 1918 թ. հունիսին հայկական պատվիրակությունը, վարչապետ Ալեքսանդր Խատիսյանի գլխավորությամբ, Կ. Պոլիս է ժամանել, տպավորությունը հետևյալն է եղել. «Ուշադրութեամբ կը դիտէինք քարափը հաւաքուած ամբոխի դէմքերը եւ չէինք կարող գտնել հայեր ...»[3]*: Հավանաբար, հայերը չէին հավատում, որ սարսափելի աղետներից հետո Հայաստանի անկախության ձեռքբերումը հնարավոր էր: Հետաքրքրական է, որ երբ երկու տարի հետո Ալ. Խատիսյանը դարձյալ Կ. Պոլիս է գալիս, մի քանի պոլսահայ*

---

* *Ներկայացվել է 13. III. 2024 թ.: Հոդվածը տպագրության է երաշխավորել գիտական ղեկավար, պ. գ. դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Ա. Խառատյանը (07. III. 2024 թ.): Ընդունվել է տպագրության 21. XI. 2024 թ.:*

[1] *Հայոց պատմություն. 2010, 38:*

[2] *Կ ե ս ո յ ա ն. 2021, 61:*

[3] *Խ ա տ ի ս ե ա ն. 1930, 79:*

կանայք նրան պատմել են, «թէ ինչպէս այն ատեն իրենց տուներու մէջ պահ-ուրտած՝ ջերմօրէն աղօթած են մեր առողջութեան ու բարօրութեան համար»[4]:

Պոլսահայերը հանրապետության հռչակման մասին իրենց ոգևորությունն ավելի ազատորեն արտահայտել են 1920 թ. հունվարի 19-ին՝ Փարիզի Հաշտության խորհրդաժողովում ՀՀ պաշտոնական ճանաչումից հետո: 1920 թ. փետրվարի 1-ին՝ կիրակի օրը, Կ. Պոլսի հայաշատ թաղերում հայությունն այս առթիվ կազմակերպել է տարբեր մշակութային հանդիսություններ՝ համայն հայության համար հայրենիքի նշանակությունն արծարծող բանախոսություններով ու տոնակատարություններով: Սակայն նկատի ունենալով Թուրքիայում տիրող քաղաքական պայմանները՝ միջոցառումները տեղի են ունեցել բավական զուսպ: Այդ է պատճառը, որ անգամ տեղի թերթերն այս հանդիսությունները մեկնաբանել են որպես «խաղաղ արտայայտութիւններ»[5]: Հանրապետության օրինավոր ճանաչումից մի քանի ամիս անց կատարվել են փառավոր հանդիսություններ: Այսպես՝ Զավեն պատրիարքը[6] հատուկ կոնդակով հրապարակել է Կ. Պոլսի եկեղեցիների բացումը, որոնք փակ էին 1920 թ. ապրիլի 11-ից ի վեր Կիլիկիայի ու գավառի հայության հետ պատահած աղետի պատճառով: Հետո Ազգային ընդհանուր ժողովի որոշմամբ Հայաստանի անկախության պայքարում զոհվածների հիշատակը ոգեկոչելու համար Կ. Պոլսի հայկական եկեղեցիներում հոգեհանգստյան արարողություններ են տեղի ունեցել[7]: Միաժամանակ երեք հարանվանությունների (Պոլսի Հայոց պատրիարքարան, հայ կաթոլիկ և Հայ ավետարանական համայնքներ) առաջնորդները որոշում են կայացրել հայ համայնքի անունից շնորհավորական նամակ ուղարկել Հայաստանի իշխանություններին[8]:

Պոլսահայերի օգնությունը հայրենիքին

Պոլսահայերի առաջին օգնության ջանքերը երևում են ՀՀ սահմանադրության նախաձեռնման շրջանում, որի համար արդարադատության նախարարությունը 1920 թ. սկզբին դիմում է Կ. Պոլսի հայոց պատրիարքարանին. «Հայկական Հանրապետութեան Դատական նախարարութեան կողմէ պատրիարքարան ուղղուած գիր մը կ'ըսէ թէ ի մօտոյ պիտի կազմուի Խառն Յանձնաժողով մը, զբաղելու համար հայկական օրինագիրքի պատրաստութեամբ»[9]: Այդ հանձնաժողովն ուսումնասիրելու էր «արեւելահայոց եւ արեւմտահայոց մէջ գոյութիւն ունեցող օրէնքները»:

---

[4] *Խ ա տ ի ս յ ա ն. 1930, 80:*

[5] *Հայկական Հանրապետութեան ճանաչումը. – «Ժամանակ» (Կ. Պոլիս), 21. I– 03. II. 1920:*

[6] *Զավեն արքեպս. Տեր-Եղիայանը (1868–1947 թթ.) Կ. Պոլսի Հայոց պատրիարքական գահին է ընտրվել 1913–1915 թթ., երկրորդ անգամ՝ 1919–1922 թթ. (տե՛ս Զաւէն արքեպս. 1947, 364):*

[7] *Եկեղեցիներու բացումը վաղը. – «Ճակատամարտ» (Կ. Պոլիս), 20. V. 1920, տե՛ս նաև Հայաստանի Անկախութեան տօնը Պոլսոյ մէջ. – «Ճակատամարտ», 25. V. 1920:*

[8] *Հայաստանի Անկախութեան տօնը Պոլսոյ մէջ. – «Ճակատամարտ», 25. V. 1920, տե՛ս նաև Համազգային ժողովը իր շնորհաւորութիւնը կը յայտնէ. – «Ճակատամարտ», 28. V. 1920:*

[9] *Հայկական օրինագիրքի կազմութիւնը. – «Ժողովուրդի Ձայնը» (Կ. Պոլիս), 05 – 18. IV. 1920:*

Ազգային կենտրոնական վարչության քաղաքական ժողովի 1920 թ. ապրիլի 30-ի նիստի խորհրդակցություններից հետո որոշվում է «Կ. Պոլսի մասնագէտներու սահմանադրական կանոններու շուրջ» աշխատություններն ուղարկել Երևան: Այս առիթով «Պատրիարքարանէ կը պահանջեն նաեւ ժողովի արձանագրութիւններ, իրաւագիտական բառարանի եւ մատենադարանի կազմութեան համար»[10]: Հանրապետության նախկին վարչապետ Ալ. Խատիսյանի խնդրանքով ձեռնարկվում է մասնագետների ցանկի կազմում, որում ընդգրկվելու էին այնպիսի իրավագետներ, որոնք ՀՀ-ին ծառայելու էին իրենց պատրաստակամությամբ[11]:

Պոլսահայերն աջակցում են նաև Երևանում առաջին համալսարանի հիմնադրման ծրագրային գաղափարին: «Հայկական Հանրապետութեան Երեւանի մէջ հաստատուած առաջին համալսարանի ծրագիրը» ուղարկվում է Զավեն պատրիարքին, ով էլ ծրագիրը հանձնում է Ուսումնական խորհրդին, որը «… կարդալէ յետոյ այդ ծրագիրը, որոշեց Ս. Պատրիարքի միջոցաւ յայտնել իր խնդակցութիւնը Հայկական Հանրապետութեան, մաղթելով ամէն յաջողութիւն այս օգտակար ձեռնարկի համար»[12]:

Պոլսահայերն ընդառաջում են հանրապետության ղեկավարների կոչերին ու հրավերներին՝ հայտարարելով, որ «Հայ Գիւղատնտ. Միութեան կողմէ այս օրերս Հայաստան պիտի ղրկուին հողագէտներ եւ անասնաբոյժներ, ծառայելու համար Հ. Հանրապետութեան մէջ»[13]: Նրանք իրենց աջակցությունն են հայտնում նաև արհեստակցական տարբեր միությունների միջոցով, անսալով՝ «Հայ Ճարտարագէտներու եւ Ճարտարապետներու ընկերութիւնը Հայկական Հանրապետութեան պատասխանատու վարիչներուն մասնաւոր յայտարարութեան եւ հրաւէրին առթիւ կոչ կ՚ուղղէ բոլոր մասնագէտներու՝ լծուիլ վերածնող հայրենիքի ստեղծագործական աշխատանքին»[14]: Արդյունքում կազմվում է ցանկ հետևյալ մասնագիտություններով՝ մեքենավարներ, կայարանապետներ, հեռագրողներ, հեռագրագծի վարպետներ, շոգեկառքի վարպետներ, երկաթուղային զանազան ճյուղերի վարպետներ, ճարտարապետներ և այլն: Միաժամանակ պահանջվում է, որ այս մասնագիտություններն ունեցող անձինք արձանագրության համար դիմեն «Հայ Ճարտագէտներու եւ Ճարտարապէտներու ընկերակցութեան գրասենեակ»-ին: Մասնագետներին Հայաստան ուղարկելու համար անհրաժեշտ էր ստեղծել հատուկ հիմնադրամ՝ նրանց ճանապարհորդության ծախսերը հոգալու նպատակով: Հետևաբար, ստեղծվում է «ճանապարհածախսի ֆոնտ», և գումարներն ի պահ են դրվում «Հայկական Դրամատանը»: Նույն նպատակով «Հայ Գիւղատնտ. Միութեան» կողմից մի խումբ է ուղարկվում Հայաստան[15]: Այդ միությունը մի «Ուսանողական հիմնադրամ»

---

[10] *Հայկական օրինագիրքի կազմութիւնը. – «Ժողովուրդի Ձայնը», 05–18. IV. 1920:*

[11] *Պ. Խատիսեան. – «Ժողովուրդի Ձայնը», 19. VI– 02. VII. 1920:*

[12] *Հայկական Հանրապետութեան համալսարանը. – «Ժողովուրդի Ձայնը», 18 – 31. X. 1919:*

[13] *Տե՛ս Հայ Մասնագետներ Դէպի Հայաստան. – «Ժողովուրդի Ձայնը», 22. VII – 04. VIII. 1920:*

[14] *Կարեւոր Կոչ.– «Ճակատամարտ», 07. VII. 1920:*

[15] *1920 թ. օգոստոսին Երևան ժամանեցին հողագետներ Կոպեռնիկ Թանտրճյանն ու Զարմայր Մարտիրոսյանը, որոնք Նոր Բայազետում ստանձնեցին երկրագոր-*

է ստեղծում, որի նպատակն էր՝ «մարզել ազգին յաջողակ որբերն ու ուսանողները ամերիկեան ագարակներու եւ երկրագործական քոլէժներու մէջ: Արմաշի գիւղտ. որբանոցի երկու ուսանողներ արդէն ճամբայ հանուած են դէպի Միացեալ Նահանգներ»: Հենց այդ ժամանակ կային ուսանողներ, ովքեր Արմաշից մեկնեցին Ամերիկա՝ այնտեղ արհեստավարժ մասնագետներ դառնալու համար[16]:

Հայաստան ուղարկվելիք օժանդակությունների մաս են կազմում նաև վերոհիշյալ միության կողմից ուղարկված անասնաբուժական տարբեր գործիքները[17]: Պոլսահայերը Հայաստանի առողջապահական հարցերին աջակցելու նպատակով Կ. Պոլսի «Հայ Կարմիր Խաչ»-ի և «Պոլսահայ դեղագործական միութեան» միջոցով օգնություններ են իրականացնում: Նշյալ վերջին միությունը դեղեր է ուղարկում Երևան, իսկ «Կարմիր Խաչը» 1922 թ. հունվարին բժշկական առաքելություն է իրականացնում: Վերջինիս նպատակն էր՝ առողջապահական սպասարկման կազմակերպումը, հիվանդանոցների, դեղատների հաստատումն այն քաղաքներում, ուր համաճարակ կար[18]: Առաքելության մաս էին կազմում 3 բժիշկ, 1 դեղագործ և 1 հիվանդապահուհի, ովքեր իրենց հետ տարել էին 150 սնդուկ դեղորայք, շարժական հիվանդանոցի սարքավորումներ, վիրաբուժական և ծննդաբերական գործիքներ, զանազան պատվաստներ և այլն[19]: Կ. Պոլսի «Հ. Կ. Խաչի Բժշկ. Առաքելութեան Դարմանատուն» անվանումով Երևանի մեջ բացվում է հիվանդանոց, ուր բուժում են ստանում զինվորականներ, պետական պաշտոնյաներ և շարքային մարդիկ[20]: Բացի դրանից՝ «Կարմիր Խաչը», ընդառաջելով Հայաստանի «Կարմիր Խաչի» կոչին, մալարիայի տենդի բուժման համար խիստ արժեքավոր 10 կգ քինին է ուղարկում: Ի պատասխան՝ 1920 թ. հոկտեմբերի 9-ին Հայաստանի արտաքին

ծական պաշտոններ: Սեպտեմբերի վերջին Երևան եկավ 170 հոգանոց մի խումբ, որի կազմում էին տարբեր բնագավառների արհեստավորներ ու մասնագետներ, նաև՝ հողագետ Միհրան Կարապետյանն ու անտառագետ Բարունակ Պողոսյանը՝ պետական գույքի ու գյուղատնտեսության նախարարությունում ծառայելու համար: Հավելենք, որ Արմաշի գյուղատնտեսական վարժարանի աշակերտների հետ Հայաստան մեկնեցին հողագետներ Ռաֆայել Ապտուլլահյանը, Հայկ Սերենկյուլյանն ու Հովհաննես Թեփելեքյանը (տե՛ս Հայ մասնագետներ դէպի Հայաստան. – «Ճակատամարտ», 26. IX. 1920, 02. IX. 1920, 23. IX. 1920):

[16] Արմաշի գյուղատնտեսական որբանոցի ուսանողներից կազմված խումբը 1921 թ. հունվարին մեկնում է Միացյալ Նահանգներ: Նույն օրերին որոշվում է նաև երեք ուսանող ուղարկել՝ ծանոթանալու կաթնատնտեսական արդյունաբերությանն ու հետո իրենց փորձը կիրառելու Հայաստանում (տե՛ս Հ. Գ. Մ. Ուսանողական Ֆոնտ. – «Ճակատամարտ», 05. I. 1921):

[17] Անասնաբուժական Գործիքներ Դէպի Հայաստան. – «Ճակատամարտ», 28. VIII. 1920:

[18] Տե՛ս Հայաստանի Բժշկ. Առաքելութիւն.– «Ժողովուրդի Ձայնը», 08 – 21. XII. 1921, տե՛ս նաև՝ Հ. Կ. Խաչի առաքելութիւնը Հայաստանի մէջ. – «Ժողովուրդի Ձայնը», 29. I – 11. II. 1922:

[19] Տե՛ս Հայ Կարմիր Խաչի Հայաստանի Առաքելութեան Տեղեկագիրը. – «Ժողովուրդի Ձայնը», 01. VII. 1922:

[20] Հայ Կարմիր Խաչի Հայաստանի Առաքելութեան Տեղեկագիրը. – «Ժողովուրդի Ձայնը», 02. VII. 1922:

գործոց նախարարության քարտուղար Վ. Սարբեյանը Կ. Պոլիս շնորհակալության նամակ է հղում[21]*:*

Տարբեր ձեռնարկներ են կատարվում երիտասարդության և մանուկների մշակութային ու մարզական ուսուցման համար: Կ. Պոլսի «Հայ մարմնամարզական ընդհանուր միութեան» կողմից նշանակված երեք սկաուտ-մարզիչներ՝ Վահան Զերազը, Տիգրան Խոյանը և Օննիկ Յազմաճյանը, 1920 թ. հուլիսի 25-ին ժամանում են Հայաստան. «Սկաուտ մարզիչները իրենց հետ կը տանին Պոլսոյ հայ բանակի նուիրահաւաք մարմնի կողմէ սահմանուած (520) ոսկի գնուած սկաուտական եւ մարզական անհրաժեշտ գիրքեր, գոյքեր եւ հագուստներ»[22]*:*

Օգնությունների այս շարքում այլ նախաձեռնություններ էլ են կատարվում հայ բանակի համար: «Հայ տրամաթիք ընկերութիւնը կազմակերպած էր թատերական հանդէս մը, շահոյթը տրամադրելով, Տիկին Խատիսեանի (Ալ. Խատիսյանի կինը – Ս. Մ.) բաղձանքի համաձայն՝ Հայաստանի արիներու զգեստաւորման»[23]*, իսկ 1920 թ. հունվարին հաստատվում է բանակի հանգանակության կենտրոնական մարմին, որը Երևան է ուղարկում հանգանակված գումարները*[24]*: Դրա առթիվ ՀՀ ռազմական նախարար Ռուբեն Տեր-Մինասյանը շնորհակալություն է հայտնում Կ. Պոլսի Կենտրոնական մարմնի նախագահությանը՝ իր նամակում գրելով. «Այն իրերը, որ մարմինդ այնպիսի աշխատասիրութեամբ ու սիրով հաւաքել է Պոլսում մեր զգայուն ու սիրելի հայրենակիցների շրջանում մեր բազմաչարչար ու թանկագին բանակի համար, վերջապէս ստացանք, որի համար ամբողջ հայ բանակի անունից յայտնում եմ իմ խորին շնորհակալութիւնը Ձեր ցոյց տուած եւ ունեցած հոգատարութեան համար դէպի բանակը»*[25]*:*

Տարբեր ձևերով հայրենիքին օգնություն են ուղարկում նաև անհատները: Օրինակ՝ պոլսահայ հայտնի գրավաճառ Պ. Պալենցը ցանկանում էր Ալ. Խատիսյանի միջոցով 1.000 ոսկի արժեքով դասագրքեր և մատենադարանի հատորներ տրամադրել Հայաստանի կրթական նախարարությանը[26]*, որի հետագա ընթացքը մեզ հայտնի չէ:*

Պոլսահայերը ՀՀ-ին բարոյապես և նյութապես օգնելու կոչ են ուղղում և քաջալերում Սիսյուռքի հայրենակիցներին: Այդպիսի օրինակներից է Զավեն պատրիարքի կողմից Հովհ. Քաջազնունու միջոցով 1919 թ. Եվրոպա ու Ամերիկայի Միացյալ Նահանգներ ուղարկված օգնության կոնդակը, որը վերաբերում էր Հայաստանում տիրող սովին ու համաճարակին. «Այս կոնդակը սրտառուչ կոչ մըն է ամբողջ հայութեան, օգնելու անօթութեան եւ

[21] *Վ. Սարբեյանը, պատասխանելով Ֆ. Թախտաջյանի 1920 թ. սեպտեմբերի 24-ի գրությանը, տեղեկացնում էր, որ դեղերը հասել են ու հանձնվել են Կարմիր Խաչի տնօրեն Գրիգոր Զալխուշյանին [տե՛ս Հայաստանի ազգային արխիվ (այսուհետ՝ ՀԱԱ), ֆ. 200, ց. 1, գ. 415, թ. 201]:*

[22] *Տե՛ս Հայ Արիները Դէպի Հայաստան. – «Ճակատամարտ», 27. VII. 1920:*

[23] *Հայաստանի Արիներուն Համար. – «Ճակատամարտ», 12. IX. 1920:*

[24] *Հայ բանակին օգնելու համար. – «Ճակատամարտ», 02. I. 1920:*

[25] *Հայ բանակի նուիրահաւաք. – «Յառաջ» (Երևան), 18. VIII. 1920:*

[26] *Տե՛ս Դասագիրքեր Հայաստանի Համար. – «Ճակատամարտ», 21. IX. 1920:*

տառապանքի ենթարկուած Հայաստանի ժողովրդեան եւ հայրական գեղեցիկ յորդորներով կը զգացնէ ամէն անհատի խղճի պարտքը»[27]:

Հայաստանի խորհրդայնացումից մի քանի օր առաջ՝ 1920 թ. հոկտեմբերի 24-ին, Կ. Պոլսում հիմնադրվում է «Հայրենիքի Օգնութեան Մարմին» կազմակերպությունը, որի նպատակն էր՝ «համաժողովրդական միջոցներով օգնութեան հասնիլ, իր բարոյական եւ նիւթական օժանդակութիւնն ընծայելով Մայր հայրենիքի եւ մասնաւորապէս հայ զինուորին անմիջական պէտքերուն»[28]: Հայաստանին տրամադրվելիք տարբեր տեսակի օգնության նպատակով պոլսահայ համայնքը «կը ճշդէ յատուկ օրեր եւ շաբաթներ, որոնց կը տրուին նպատակայարմար անուններ»: Օրինակ՝ «Հայրենիքի Օգնութեան Մարմին»-ը 1921 թ. մարտի 10-ին «Հայրենիքի օր» անվան տակ հանդիսություններ է կազմակերպում Կ. Պոլսի հայաշատ թաղերում[29]:

Կարևոր օգնություններից էր սերմացու հայթայթելու աշխատանքը: Ամենայն Հայոց Գևորգ Ե կաթողիկոսի կողմից պատրիարքարան ուղարկված 1922 թ. փետրվարի 11-ի կոնդակով ներկայացվում է «Հայրենեաց այս կարիքը»[30]: Պատրիարքարանը, անմիջապես գործի անցնելով, հեռագրեր է ուղարկում արտասահման, որպեսզի սերմացու հայթայթելու միջոցներ որոնվեն և գումարների հանգանակություն կատարվի: Կ. Պոլսի հայ գյուղատնտեսներն իրենց կարծիքն են հայտնում՝ նշելով, որ սերմացուները մինչև ապրիլ ամիս պետք է հասնեն Հայաստան, հակառակ պարագայում ավելի ուշ ուղարկված սերմացուներն անօգուտ էին: Որոշվում է չսպասել հանգանակության արդյունքին, այլ օգտվել «պատրաստի» գումարից այն պայմանով, որ առաջիկայում կատարվելիք հանգանակությունից վճարվի փոխառնված գումարը: Ի վերջո, Հայաստանի համար սերմացու հայթայթելու նպատակով կազմված մարմինը ՀՕՄ-ի անունից 500 տոննա գարի է ուղարկում Հայաստան[31]: Հայաստան է մեկնում պոլսահայ Մ. Գալֆայանը: 1922 թ. փետրվարին Կ. Պոլիս վերադառնալով՝ նա «Ժողովուրդի Ձայն»-ի խմբագրին ծանոթացնում է իրավիճակի մանրամասնություններին, պատմում, որ Երևանում ու մեծ քաղաքներում սովը ծայրահեղ վիճակում չէր, սակայն թանկությունն ու հայկական դրամի անկումը պատճառ էին դարձել, որպեսզի թշվառությունը հաստատվեր նաև քաղաքներում: Դեղորայքի պակասը, սննդի ու բնակարանների չգոյությունը հետզհետե ավելացնում էին հիվանդների թիվը[32]:

Պոլսի ՀՕՄ-ի վարչական խորհուրդը համայնքին նվիրատվության քաջալերելու նպատակով, պատրաստում է գեղարվեստական արժեքավոր երկու հուշամատյան: Դրանցում ներկայացված էին երեխաների լուսանկարներ, որոնք մեծերից ոչ պակաս ջանքեր էին գործադրել սերմացու հայթայթելու

---

[27] Օգնութիւն Հայաստանի. – «Ժամանակ», 05–18. VI. 1919:

[28] Հրաւէր. – «Ժողովուրդի Ձայնը», 22. X – 04. XI. 1920:

[29] Այսօր Հ.Օ.Մ-ի Օր է. – «Ճակատամարտ», 10. III. 1921:

[30] Կաթողիկոսի Կոչը. – «Երկիր» (Կ. Պոլիս), 07. III. 1922, տե՛ս նաև՝ ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1349, թ. 1:

[31] Օգնեցէք Հայաստանի, սերմնցու տուէք հայ մշակներուն. – «Ժողովուրդի Ձայնը», 17. II – 02. III. 1922:

[32] Տե՛ս Հայաստանէն Նորագոյն Տեղեկութիւններ. – «Ժողովուրդի Ձայնը», 17. II– 02. III. 1922, 18. II – 03. III. 1922:

գործում: Որոշվում է այդ հուշամատյանների առաջին օրինակն ուղարկել Հայաստանի պետական թանգարանին, իսկ երկրորդը՝ Ազգային Մատենադարանին[33]: Հրավեր է ուղղվում ՀՕՄ-ի մասնաճյուղի անդամներին ու բազմաթիվ երիտասարդ ուժերի, որոնք հավաքվելով Բերայի եկեղեցու խորհրդարանում՝ կազմում են սերմացու հանգանակող հանձնախմբեր[34]:

Սերմացու ուղարկելու ցանկությունը խրախուսելու համար որոշվում է «Վերջին լուր» թերթում տպագրել այն մանուկների նկարները, որոնք 20 ոսկի և ավելի գումար էին նվիրել այդ նպատակին[35]: Սերմացուի հայթայթմանն ի նպաստ կատարվում են նաև մարզական տարբեր միջոցառումներ ու մրցումներ[36]: Զավեն պատրիարքը 1922 թ. փետրվարից հետո ավելի մեծ ուշադրություն է սկսում դարձնել սերմացու հայթայթելու խնդրին ու հորդորում է ժողովրդին մասնակցել նվիրատվությանը[37]:

Ի վերջո, Կ. Պոլսից, որպես առաջին քայլ, 1922 թ. փետրվարի վերջին 100.000 կգ, իսկ մարտի վերջին՝ 150.000 կգ գարի, 30.000 կգ կորեկ և 200 պարկ ալյուր է ուղարկվում Հայաստան: «Այս վերջինը հացահատիկին հետ պիտի փոխանակուի Հայաստանի այն շրջաններու գիւղացիներուն համար, որոնք իրենց պարենաւորումին բաւող պահծու արմտիք ունին»[38]: Օգնությունների մի մասն էլ հասնում է Մայր Աթոռ սուրբ Էջմիածին: Էջմիածնից պատրիարքարանին ուղարկված նամակով երկրագործական գործիքներ են խնդրում ուղարկել միաբանությանը հատկացված արտերի մշակման համար. «Պատրիարքարանը Գիւղատնտեսական Միութեան միջոցաւ որոշած ըլլալով հարկ եղած գործիքները, կը ջանայ հայթհայթել անհրաժեշտ գումարը գնելու եւ ղրկելու համար այդ գործիքները»[39]:

Պոլսահայերի նպաստը Հայաստանի Հանրապետության առաջին փոխառությանը

Պետության ֆինանսական կացությունը բարելավելու համար Հայաստանի կառավարությունը որոշում է 20 մլն ամերիկյան դոլարի փոխառություն (պետական պարտատոմս) թողարկել 1920 թ.: Այդ որոշումն ընդունվում է հենց այն շրջանում, երբ ակնհայտ է դառնում՝ Հանրապետության տնտեսական աճի համար օտարներից օժանդակություն սպասելն անիմաստ է: Ալ. Խատիսյանը այս առիթով նշում է. «Մենք դիմած ենք օտար պետութեանց եւ ըսած ենք որ մեր պարտքերը վճարեցէք ձեր դրամներով: Սակայն անոնք եւս կը սպասեն փոխառութեան հետեւանքին եւ կ'ըսեն: Նախ հայերը պէտք է օգնեն իրենք իրենց, որպէսզի մենք ալ օգնենք: Ասոնք իբրեւ օրինակ ցոյց կուտան Մանչէսդրրի հայ գաղութ որ կրնայ քանի մը միլիոն արձանա-

---

[33] *Ալպամ փոքրիկներուն համար. – «Վերջին Լուր» (Կ. Պոլիս), 07. III. 1922:*

[34] *Սերմնցու փութացնենք Հայաստան. – «Վերջին Լուր», 06. III. 1922:*

[35] *Սերմնցու փութացնենք Հայաստան. – «Վերջին Լուր», 22. III. 1922:*

[36] *Երեկուան ֆութպոլի մրցումը ի նպաստ սերմնցուի. – «Վերջին Լուր», 20. III. 1922:*

[37] *Ս. Պատրիարքը երէկ երեկոյ Թօփգաբու երթալով զբաղեցաւ Հայաստանի սերմնցուի հանգանակութեան գործի կազմակերպութեամբ. – «Ժողովուրդի Ձայնը», 12. III. 1922:*

[38] *Սերմնցուի Երկրորդ Առաքումը Հայաստան. – «Ժողովուրդի Ձայնը», 25. III. 1922:*

[39] *Էջմիածինէն պատրիարքարան հասած նամակ.– «Ժողովուրդի Ձայնը», 24. V. 1922:*

գրուիլ»[40]: Մյուս կողմից՝ փոխառության մասնակցելը միայն ազգասիրական կամ բարեգործական նախաձեռնություն չէր: Այս կերպով մարդիկ, բացի հայրենիքի բարգավաճմանն օգնած լինելու գոհունակությունից, նաև լավ առիթներ են գտնում իրենց դրամական միջոցներն ավելացնելու տեսանկյունից:

Փոխառության մասին օրենքը Հայաստանի խորհրդարանում հաստատվում է 1920 թ. հունիսի 18-ին՝ «Համաձայն Հայաստանի Պարլամենտի 1920 թ. Յունիսի 5ի Օրէնքի»: Դրա հեղինակներն էին վարչապետ Համո Օհանջանյանը, ֆինանսների նախարար Աբրահամ Գյուլխանդանյանը, նախարարների խորհրդի գործերի կառավարիչ Միհրան Խոջամիրյանը[41]:

Կ. Պոլսում «փոխառության բացումը» կատարվում է 1920 թ. օգոստոսի 29-ին[42]: «Փոխառության մասնախմբի» նախագահ Ալ. Խատիսյանի ներկայացուցիչն էր Գ. Զալխուշյանը, ով 1920 թ. հունվարին ընտրվել էր Կարմիր Խաչի կենտրոնական վարչության նախագահ, իսկ նոյեմբերին՝ մեկնել Կ. Պոլիս ու այնտեղ մնացել Հայաստանի խորհրդայնացումից հետո: Նա պարզաբանել է, թե առաքելության նպատակն էր դժվարությամբ ձեռք բերված անկախության գործընթացի ամրապնդումը՝ վստահեցնելով, որ «շուտով բոլորը կը հասկնան Անկախութեան փոխառութեան հրամայողական պահանջը մեր ազատ եւ անկախ գոյութեան համար, բոլոր հայերը կ'իմանան որ առանց փոխառութեան չկայ մեզի համար ոչ մէկ փրկութիւն եւ այն ժամանակ բարձր ձայն կուտայ ինձ իմ ազգը եւ կը կատարէ իր պարտքը լիաբուռն հայրենիքի առաջ»[43]:

Ալ. Խատիսյանը ստանձնել է նաև Հայաստանից դուրս կատարվելիք փոխառության կազմակերպումը, հատկապես՝ հայաշատ ու հարուստ գաղութներում: Պոլսահայերն ու հայաշատ գավառների հայերը, իրենց հայրենակցական պարտականությունը կատարելով, մասնակցել են դրան: Ալ. Խատիսյանն այս գործընթացը կազմակերպելու համար 1920 թ. երկու անգամ այցելել է Կ. Պոլիս. առաջինը՝ հունիսին, իսկ երկրորդը՝ սեպտեմբերին[44]: Առաջին այցելության օրերին նա Կ. Պոլսի «Հայ ակումբ»-ում հայ առևտրականներին, բոլոր կուսակցություններին, մամուլի ներկայացուցիչներին և հարանվանություններին կոչ է ուղղում՝ նպաստել փոխառության իրականացման գործին: Դրա հաջողության համար չեշտելով մանավանդ կանանց դերը՝ նա հատուկ հայտարարությամբ է հանդես գալիս՝ օրինակ բերելով Բաթումի ու Թիֆլիսի կանանց, որոնք, «Ոսկու օր» կազմակերպելով, իրենց թանկարժեք զարդերը նվիրում էին այս նպատակին: Ալ. Խատիսյանը հույս է հայտնում, որ Կ. Պոլսի հայ կանայք էլ կարող են հանդես գալ նման նախաձեռնությամբ[45]: Նա իր կոչը կրկնում է քաղաքից հեռանալուց առաջ՝ ասելով. «Ինձի

---

[40] *Պատրիարքարանի ընդհանուր ժողովը. – «Ժողովուրդի Ձայնը», 20. VI – 03. VII. 1920:*

[41] *Հ. Հ. Անկախութեան Փոխառութիւնը. – «Ճակատամարտ», 29. VI. 1920:*

[42] *Փոխառութեան բացումը Կ. Պոլսոյ մէջ. – «Ճակատամարտ», 01. IX. 1920:*

[43] *Ինչո՞ւ սպասում եմ ձայնիդ, իմ հայ ազգ.– «Յառաջ», 08. VIII. 1920:*

[44] *Պ. Խատիսեան Պոլսոյ մէջ. – «Ճակատամարտ», 27. VI. 1920, Պ. Խատիսեան Այսօր կը հասնի. – «Ճակատամարտ», 07. IX. 1920:*

[45] *Պատրիարքարանի ընդհանուր ժողովը. – «Ժողովուրդի Ձայնը», 20. VI – 03. VII. 1920:*

վստահուած այս դժուար պարտականութեան համար յոյս ունիմ վայելել մամուլի օժանդակութիւնը»[46]:

Ալ. Խատիսյանի այցելությունից հետո կազմվում է «Փոխառության համար Կ. Պոլսի Կենտրոնական Հանձնախումբը», որի որոշումները ժողովրդին հաղորդվում են մամուլի միջոցով: Նախ հրապարակվում է հանձնախմբի անդամների ցանկը[47]*, կոչ է ուղղվում նաև Կ. Պոլսի առևտրականներին*[48]*:*

Պատրիարքարանի «Քաղաքական ժողովի» 1920 օգոստոսի 28-ի նիստի որոշմամբ՝ ազգային բոլոր հաստատություններին արտոնություն է տրվում, որ, համաձայն իրենց կարողության, կարող են մասնակցել փոխառությանը: Համայնքային հաստատությունները գործի են անցնում և քաղաքի հայաշատ թաղերում սկսվում են «փոխառության արձանագրությունները»: Կ. Պոլսի թերթերը, դեռ գրանցումները չսկսած, հետո՝ էլ, հայտարարություններով ու հոդվածներով շարունակ քաջալերում են փոխառությանն ու մասնակցում հանգանակություններով[49]*: «Երկիր» օրաթերթը հանդես է գալիս հայտարարություններով. «Հայեր, մասնակցե՛ք Հանրապետության Փոխառությանը»*[50]*, իսկ «Ճակատամարտ»-ը գրում է. «Հայ մարդ լսիր՝ կատարե՞լ ես այսօր քո պարտքդ հայրենիքի հանդեպ: Ավելի քան մէկ միլիոն զոհեր տուինք: Ստացանք մեր հողը, այժմ տնտեսական քայքայումը կըսպառնա: Անկախութեան փոխառութիւնը միայն կը փրկի մեզ: Նա պիտի վերականգնեցնի մեր արդիւնաբերական ուժերը, տնտեսութիւնը, մեր դրամի արժէքը: Գրուի՛ Անկախութեան Փոխառութեան»*[51]*: Թերթը նաև բարձրաձայնում էր. «Հայեր, Հայրենիքը ոչ զոհաբերութիւն կը պահանջէ ձեզմէ, ոչ բարեգործութիւն. կատարեցէք միայն ձեր պարտքը, դրամ տալով դուք կը փրկէք մեր ազատութիւնը, մեր երկիրը, մեր սեփականութիւնը, այսինքն դուք ձեզ կը փրկէք: Գրուեցէք Հայաստանի Անկախութեան փոխառութեան»: Իսկ «Վերջին Լուր»-ն իր առաջին էջից ձայնում էր, «թէ՛ թշնամի եւ թէ՛ բարեկամ հայերը կը դիտեն, ազգին պատիւը պէտք է վեր պահել»*[52]*:*

Փոխառության հաջողության համար ջանք է թափում նաև Կ. Պոլսի օտարալեզու մամուլը: Ֆրանսերենով հրատարակվող “Le Bosphore” *թերթի խմբագիր Միշել Բայարիսը «Լսեցէք Հայաստանը, որ Ձեզի օգնութեան կը կանչէ» վերնագրով խմբագրականում գրում է՝ հայերը հրաշքներ են գործել սեփական միջոցներով, փոքր հանրապետություն են հիմնել և այնտեղ հաստատել՝ 64 գործարան, 800 դպրոց ու համալսարան, 6.000-ից ավելի գործավորներ էլ լծվել են երկիրը «ակոսող» 550 կմ երկաթուղի կառուցելու համար, ուստի պետք է օգնել և «ուժ տալ» նրանց*[53]*: Հունարենով հրատարակվող*

---

[46] *Ալ. Խատիսյանը 1920 թ. հունիսի 20-ին Կ. Պոլսից մեկնում է Մարսել (տե՛ս Խատիսեան կը մեկնի. – «Ժողովուրդի Ձայնը», 21. VI – 04. VII. 1920):*

[47] *Հրաւէր Հայ Առեւտրականներու Փոխառութեան Համար. – «Ճակատամարտ», 27. VIII. 1920:*

[48] *Տե՛ս Կոչ. – «Ճակատամարտ», 29. VIII. 1920:*

[49] *Փոխառութիւնը եւ Ճակատամարտ.– «Ճակատամարտ», 29. VIII. 1920:*

[50] *Հայեր Մասնակցէք Հ. Հանրապետութեան անկախութեան փոխառութեան. – «Երկիր», 25. VIII. 1920:*

[51] *Հայեր. – «Ճակատամարտ», 14. IX. 1920:*

[52] *Թէ թշնամի, թէ բարեկամ հայերը կը դիտեն. – «Վերջին Լուր», 27. VIII. 1920:*

[53] *Տե՛ս Լսեցէք Հայաստանը, որ ձեզի օգնութեան կը կանչէ. – «Առաւօտ» (Կ. Պոլիս), 06. IX. 1920:*

"Patris" թերթը հատուկ հոդվածով գնահատում է հայ ժողովրդի ջերմ հայրենասիրությունն ու զոհաբերությունը. «... առասպելական գտնելով զայն, մասնաւորաբար նաեւ փոխառութեան առթիւ ցոյց տրուած խանդավառութիւնը գնահատելով սրտագին համակրանք կը յայտնէ եւ յաջողութիւն կը մաղթէ»: Կ. Պոլսում ֆրանսերենով հրատարակվող "Moniteur"-ը ընթերցողների ուշադրությանն է հանձնում այն, որ Հայաստանի Հանրապետությունը շրջաբերության է հանել անկախ պետության առաջին փոխառությունը՝ ընդգծելով, որ «փոխառութեան բացումը տեղի ունեցաւ Երեւանի մէջ, նոյնինքն Խորհրդարանին մէջ եւ առաջին օրը մէկ քանի միլիոնի յանգեցան արձանագրութիւնները»[54]:

Մյուս կողմից, Ալ. Խատիսյանը, թուրքական "Vakit" օրաթերթի խմբագրին փոխառության մասին տեղեկություններ տալով, ընդգծում է. «Գիտէք թէ այս պատերազմը թուրքերուն չափ, – թերեւս ա՛լ աւելի, – վնաս պատճառեց հայերուն: Այս պայմաններուն ներքեւ անկախ վարչութիւն մը կազմել խիստ դժուար է: Ատոր համար մեր ներքին գործերն ու կազմակերպութիւնը կատարելու եւ ամբողջացնելու համար կատարեալ խաղաղութեան պէտք ունինք»[55]:

Կ. Պոլսում ազգային կուսակցությունները համատեղ հայտարարությամբ կոչ են ուղղում ժողովրդին. «Ձեր դրամները պիտի չկորսուին, ընդհակառակը ձեր կեանքի ու ապագայի ապահովութեան պիտի ծառայեն եւ դուք ձեր տան մէջ պիտի ապրիք բարգաւաճ ձեր վաստակին տէր»[56]:

Փոխառության գործի հաջողության համար «Հայկական դրամատան» տնօրեն Թ. Սուքիասյանն էլ 1920 թ. օգոստոսի 31-ին «Ճակատամարտ» թերթի խմբագրին հայտնում է, որ փոխառությունը չի նշանակում նվիրատվություն կամ «հացկատակութիւն». դա ամենանպաստավոր միջոցն է խնայողությունների համար[57]: Կ. Պոլսի հայաշատ թաղերում եկեղեցականներն արարողություններից հետո, իսկ մտավորականները՝ հանդեսների ժամանակ, խոսում են փոխառության կարևորության մասին[58]: Կոչերին ընդառաջելով՝ պոլսահայերը մասնակցում են փոխառությանը. անգամ որբերը հետևում են ավագների օրինակին[59]: Փոխառության հաջողության համար բոլոր հայ հարանվանությունները մեծ ջանքեր են գործադրում[60]:

---

[54] Հայկական փոխառութիւնը եւ օտար մամուլը. – «Ճակատամարտ», 03. IX. 1920:

[55] Պ. Խատիսեանի Կարեւոր յայտարարութիւնները Վագրթի. – «Ժողովուրդի Ձայնը», 30. VIII –12. IX. 1920:

[56] Քաղաքական Կուսակցութիւններու Կոչը.– «Ճակատամարտ», 01. IX. 1920:

[57] Տե՛ս Հայկական Դրամատան Տնօրէն Սուքիասեանի յայտարարութիւնները. – «Ճակատամարտ», 01. IX. 1920:

[58] Վաղուան Հանդիսութիւնները. – «Ճակատամարտ», 28. VIII. 1920:

[59] «Բերայի գիշերօթիկ վարժի (նախկին Բերայի որբանոց) խնամակալութեան անդամ Գառնիկ Ատիլ հետեւեալ յուզիչ դրուագը պատմեց մեզի. Մեր որբերէն Յովհաննէս, որ վարժին օրքէսթրին մեծ թմբուկը կը գարնէ, արձակուրդի օրերուն Շիշլիի Գերեզմանատունը ղրկեցի որպէսզի ինք ալ իր քանի մը ընկերներուն հետ աշխատի: Յովհաննէս 10 ոսկիի չափ դրամ մը ուելցուցած էր գերեզմանատան մէջ իր աշխատութեան փոխարէն ստացած նուերներէն: Այդ դրամարը ի պահ դրած էր քրոջս քով: Յովհաննէս անցեալ կիրակի առաւօտ կուգայ եւ քրոջմէս կ՚առնէ իր 10 ոսկի աւանդը: Յաջորդ օր կը հարցնեմ Յովհաննէսին. «10 ոսկին առիր ի՞նչ արիր», «Հայրիկ, փոխառութեան տուի» (տե՛ս Փոխառությունը եւ մեր որբերը. – «Առաւօտ», 06. IX. 1920):

[60] Հ. Հ. Փոխառությունը Հայ Կաթոլիկներու Մէջ. – «Ճակատամարտ», 05. X. 1920:

Պոլսահայ միությունները եւ հատուկ կոչերով ուղղորդում են իրենց անդամներին[61]: Փոխառության բացումը Կ. Պոլսում կատարվում է 1920 թ. օգոստոսի 29-ին՝ ուղեկցվելով ժողովրդի մեծ խանդավառությամբ: Նույն օրը «Բերա, Գում գաբու, Կետիկ-փաշա, Սամաթիա, Մաքրիգիւղ, Սան-Սթէֆանօ, Գնալը, Պէշիկթաշ, Միջագիւղ, Գուրու-Չէշմէ, Գատըգիւղ, Սկիւտար (Նոր թաղ), Սկիւտար (Գուզկունճուգ Սէլամսըզ), Խասգիւղ, Պէօյիւք Տէրէ եւ Պալաթ թաղերու մէջ Հ. Հ. Անկախութեան փոխառութեան համար կը կազմակերպուին հանդէսներ»: Հետագա օրերին մարդիկ «Կ՚արձանագրուէին շարունակ. Անկախութեան փոխառութեան» հանդիսությունները թաղերում շարունակվում են նույն թափով՝ ցույց տալով, թե ժողովուրդն որչափ ամուր էր փարված իր հայրենիքին ու պետությանը[62]:

Նկատենք, որ երբ Հայաստանի Հանրապետության դաշնակցական կառավարությունը, կորցնելով իր իշխանությունը, փոխում է երկրի ղեկավարությունը, այդ ժամանակ փոխառության ծրագիրը «կը հասնի իր վախճանին»[63]: Խորհրդային իշխանությունները հայտարարում են, որ չեն ճանաչում ոչ մի պարտք, լինի հին կամ նոր, արտաքին կամ ներքին: Այս պարագայում Կ. Պոլսի Կենտրոնական հանձնաժողովը, 1921 թ. փետրվարի 15-ին նիստ գումարելով, որոշում է իր գործունեությունը չշարունակել և «Անկախութեան Փոխառութեան անունով արձանագրուողներու կողմէ իր տրամադրութեան տակ դրուած գումարները վերադարձնել իրենց տէրերուն 1 Մարտ 1921է սկսեալ: Կ՚որոշէ նաեւ վերադարձուելիք գումարներէն զեղչել հարիւրին 5, փոխառութեան հաշւոյն եղած եւ ըլլալիք ծախսուց ի հաշիւ եւ այսպէսով գոյացած գումարէն եթէ բան մը ալ աւելնայ, այժմէն կը յատկացնէ Ս. Փրկիչ Ազգ. Հիւանդանոցի սնտուկին»[64]:

Նոր իրողության պայմաններում Կ. Պոլսի Համազգային ժողովը կոչ է ուղղում փոխատուներին՝ չմոռանալ Հայաստանն ու հայ որբերին և «Անկախության փոխառութեան Կ. Պոլսի կենտր. հանձնաժողովի» կողմից վերադարձվելիք գումարներից կարևոր բաժին հանել նրանց. «Արդ, Համազգային Ժողովս պատեհութենէն կ՚օգտուի կոչում ընելու համար ստորագրողներու ազգասիրական զգացումներուն եւ պարտականութիւն կը համարէ յիշեցնելու որ Հայաստանի բարգաւաճման համար իրեն յատկացուցած այդ դրամներէն կարեւոր բաժին մը հանեն փրկելու համար Հայաստանի ժողովուրդը, որ սովամահ կորսուելու դատապարտուած է առանց մեր աջակցութեան»[65]: Հրապարակված կոչը կրում էր երեք հոգևոր պետերի՝ Կ. Պոլսի Հայոց Զավեն պատրիարքի, հայ կաթոլիկ համայնքի պատրիարքական տեղապահ Օգոստի-

[61] *Հայ Հանրապետութեան Փոխառութիւնը. – «Ճակատամարտ», 28. VIII. 1920, Տե՛ս նաեւ Փոխառութիւնը եւ Պոլսոյ Հայ Միութիւնները. – «Ճակատամարտ», 07. IX. 1920, Փոխառութիւնը եւ Խասգիւղ Շուշան Հայուհեաց Միութիւն. – «Ճակատամարտ», 10. IX. 1920, Փոխառութիւնը Առնաուտգիւղի մէջ. – «Ճակատամարտ», 16. IX. 1920, Փոխառութիւն Գատըգիւղի մէջ. – «Ճակատամարտ», 29. IX. 1920:*

[62] *Հ. Հ. Փոխառութիւնը. Ժողովուրդը Ամուր Փարած է իր Պետութեան. – «Ճակատամարտ», 28. IX. 1920:*

[63] *Խ ա տ ի ս ե ա ն. 1968, 315:*

[64] *Հ. Ա. Փոխառութիւնը. – «Երկիր», 19. II. 1921:*

[65] *Երեք հոգեւոր պետեր կոչ կընեն. – «Ճակատամարտ», 14. V. 1921:*

նոս Արք. Սայեղյանի ու հայ ավետարանական համայնքի ազգապետ Զենոբ Պեզճյանի ստորագրությունները:

«Փոխառության Կ. Պոլսի Կենտրոնական Հանձնաժողովը» 1921 թ. մայիսին «Օսմանյան Առևտրական Դրամատուն»-ը «Հայ Բանկ»-ին հաղորդում է իր որոշման մասին՝ տեղեկացնելով, որ փոխառության համար հավաքագրված գումարները հետ էին տրվելու նվիրատուներին[66]*: Նշյալ հանձնաժողովը հուլիսի 20-ի նիստին հայտարարում է գործունեության ավարտի և լուծարման մասին: Հրապարակվում է գործունեության ու հաշվապահական ամփոփ տեղեկագիրը*[67]*:*

Եզրակացություն

Պոլսահայերը մեծ ոգևորությամբ են ընդունել Հայաստանի առաջին Հանրապետության հռչակումը և ողջ համայնքով լծվել հայրենիքի կարիքները հոգալու, ամեն կերպ աջակցելու գործունեությանը:

Հայաստանին ամենատարբեր ասպարեզներում օգնության աշխատանքներն առաջնորդել են հարանվանությունների հոգևոր պետերը՝ Թուրքիայի Հայոց պատրիարքի ղեկավարությամբ: Պոլսահայերի բերած օժանդակությանը մասնակցել են համայնքի բոլոր խավերը, որոնք կազմակերպել են տարատեսակ միջոցառումներ, մշակութային հանդեսներ:

Ընդառաջելով Հայաստանի Հանրապետության կառավարության կոչերին՝ պոլսահայությունն ամեն կերպ աջակցել է երկրի Սահմանադրության, իրավաբանական, տնտեսական, բանակի, մասնագիտական ու մշակութային կարիքների բավարարմանը: Կարևոր էր նաև պոլսահայության նպաստը Հանրապետության առաջին փոխառության կազմակերպման գործում:

Պատրիարքարանն ու պոլսահայերը, թե՛ դաշնակցական և թե՛ խորհրդային կառավարությունների ընթացքում, միշտ սիրալիր ու ուղղամիտ ընթացք են ունեցել հայրենիքի և նրա ներկայացուցիչների հետ: Նրանց համար կարևորություն չի ունեցել երկրի վարչաձևը. պարզապես մտածում էին, որ պետք է օգնեն Հայաստանին: Դա իր հուշերում լավագույնս է ներկայացրել Զավեն պատրիարքը՝ ասելով. «Պատրիարքարանը Հայաստանի վարչաձևին հետ գործ չուներ: Իրեն համար Հայաստան հայուն մայր հայրենիքն էր, որուն հետ ամէն հայու սիրտ պէտք է կապուած ըլլար ու վարչաձեւի փոփոխութիւնները ո՛չ մեկ կերպով կրնային ազդել հայրենասէրի մը զգացումներուն վրայ, քանի որ հայրենիքը մէկ էր եւ վարչաձեւերը անփոփոխելի չէին»[68]*: Նման գաղափարներով տոգորված՝ պոլսահայերը հայրենիքի համար օգնությունները կարողանում են շարունակել մինչև 1922 թ. կեսերը:*

Սիլվարթ Մալհասյան – ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի հայցորդ: Գիտական հետաքրքրությունը՝ Կ. Պոլսի հայ համայնքը 1918–1923 թթ.: Հեղինակ է 2 մենագրության և 2 հոդվածի: ORCID:0000-0001-5152-8516. silvamalhasyan @yahoo.com

---

[66] *Օսմ. Առեւտրական Դրամատուն-Հայ Պանքա.– «Ժողովուրդի Ձայնը», 23. IV – 06. V. 1921:*

[67] *Անկախութեան Փոխառութեան. –«Ժողովուրդի Ձայնը», 17– 30. VII. 1921:*

[68] *Զաւէն Արքեպ. 1947, 385:*

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ալպօմ փոքրիկներուն համար. – «Վերջին Լուր» (Կ. Պոլիս), 07. III. 1922:

Այսօր Հ.Օ.Մ-ի Օր է. – «Ճակատամարտ» (Կ. Պոլիս), 10. III. 1921:

Անասնաբուժական Գործիքներ Դէպի Հայաստան. – «Ճակատամարտ», 28. VIII. 1920:

Անկախութեան Փոխառութեան. – «Ժողովուրդի Ձայնը» (Կ. Պոլիս), 17–30. VII. 1921:

Դասագիրքեր Հայաստանի Համար. – «Ճակատամարտ», 21. IX. 1920:

Եկեղեցիներու բացումը վաղը. – «Ճակատամարտ», 20. V. 1920:

Երեկուան ֆութպոլի մրցումը ի նպաստ սերմնցուի. – «Վերջին Լուր», 20. III. 1922:

Երեք հոգեւոր պետեր կոչ կընեն. – «Ճակատամարտ», 14. V. 1921:

Ձաւէն Արքեպս. 1947, Պատրիարքական յուշերս. վաւերագիրներ եւ վկայութիւններ, Գահիրէ, տպ. «Նոր Աստղ», 423 էջ:

Էջմիածինէն պատրիարքարան հասած նամակ.– «Ժողովուրդի Ձայնը», 24. V. 1922:

Թէ թշնամի, թէ բարեկամ հայերը կը դիտեն. – «Վերջին Լուր», 27. VIII. 1920:

Ինչո՞ւ սպասում են ձայնիդ, իմ ազգ. – «Յառաջ» (Երևան), 08. VIII. 1920:

Լսեցէ՛ք Հայաստանը, որ ձեզի օգնութեան կը կանչէ. – «Առաւօտ» (Կ. Պոլիս), 06. IX. 1920:

Խատիսեան Ա. 1930, Հայաստանի Հանրապետութեան ծագումն ու զարգացումը, Աթէնք, Նոր օր, 368 էջ:

Խատիսեան Ա. 1968, Հայաստանի Հանրապետութեան ծագումն ու զարգացումը, Բ. տպագրութիւն, Պէյրութ, Տպ. Համազգային, Պատմական Մատենաշար թիւ 7, 488 էջ:

Կաթողիկոսի Կոչը. – «Երկիր» (Կ. Պոլիս), 07. III. 1922:

Կարեւոր Կոչ.– «Ճակատամարտ», 07. VII. 1920:

Կեսոյան Գ. 2021, Հայաստանի առաջին հանրապետության դիվանագիտական ներկայացվածությունը. – «Հայոց պատմության հարցեր», № 2, էջ 56–73:

Կոչ. – «Ճակատամարտ», 29. VIII. 1920:

Հ. Ա. Անկախութեան Փոխառութիւնը. – «Երկիր», 19. II. 1921:

Համազգային ժողովը իր շնորհաւորութիւնը կը յայտնէ. – «Ճակատամարտ», 28. V. 1920:

Հայ Արիները Դէպի Հայաստան. – «Ճակատամարտ», 27. VII. 1920:

Հայ բանակի նուիրահաւաք. – «Յառաջ», 18. VIII. 1920:

Հայ բանակին օգնելու համար. – «Ճակատամարտ», 02. I. 1920:

Հայ Կարմիր Խաչի Հայաստանի Առաքելութեան Տեղեկագիրը. – «Ժողովուրդի Ձայնը», 01. VII. 1922, 02. VII. 1922:

Հայ Հանրապետութեան Փոխառութիւնը. – «Ճակատամարտ», 28. VIII. 1920:

Հայ մասնագետներ դեպի Հայաստան. – «Ճակատամարտ», 02. IX. 1920, 23. IX. 1920, 26. IX. 1920:

Հայ Մասնագետներ դէպի Հայաստան. – «Ժողովուրդի Ձայնը», 22. VII – 04. VIII. 1920:

Հայաստանէն Նորագոյն Տեղեկութիւններ. – «Ժողովուրդի Ձայնը», 17. II – 02. III. 1922, 18. II – 03. VII. 1922:

Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 200, g. 1, գ. 415, ֆ. 57, g. 2, գ. 1349:

Հայաստանի Անկախութեան տօնը Պոլսոյ մէջ. – «Ճակատամարտ», 25. V. 1920:

Հայաստանի Արիներուն Համար. – «Ճակատամարտ», 12. IX. 1920:

Հայաստանի Բժշկ. Առաքելութիւն. – «Ժողովուրդի Ձայնը», 08 – 21. XII. 1921:

Հայեր Մասնակցէք Հ. Հանրապետութեան անկախութեան փոխառութեան. – «Երկիր», 25. VIII. 1920:

Հայեր. – «Ճակատամարտ», 14. IX. 1920:

Հայկական Դրամատան Տնօրէն Սուքիասեանի յայտարարութիւնները. – «Ճակատամարտ», 01. IX. 1920:

Հայկական Հանրապետութեան համալսարանը. – «Ժողովուրդի Ձայնը», 18 – 31. X. 1919:

Հայկական Հանրապետութեան ճանաչումը. – «Ժամանակ» (Կ. Պոլիս), 21. I – 03. II. 1920:

Հայկական փոխառութիւնը եւ օտար մամուլը. – «Ճակատամարտ», 3. IX. 1920:

Հայկական օրինագիրքի կազմութիւնը. – «Ժողովուրդի Ձայնը», 5–18. IV. 1920:

Հայոց պատմություն. 2010, h. IV, գ. I [Նորագույն ժամանակաշրջան (1918–1995 թթ.)], Երևան, «Զանգակ-97», 800 էջ + 24 էջ ներդիր:

Հ. Գ. Մ. Ուսանողական Ֆօնտ. – «Ճակատամարտ», 05. I. 1921:

Հ. Կ. Խաչի առաքելութիւը Հայաստանի մէջ. – «Ժողովրդի Ձայնը», 29. I – 11. II. 1922:

Հ. Հ. Փոխառութիւնը Հայ Կաթոլիկներու Մէջ. – «Ճակատամարտ», 05. X. 1920:

Հ. Հ. Փոխառութիւնը. – «Ճակատամարտ», 29. VI. 1920:

Հ. Հ. Փոխառութիւնը. Ժողովուրդը Ամուր Փարած է իր Պետութեան. – «Ճակատամարտ», 28. IX. 1920:

Հրաւէր. – «Ժողովուրդի Ձայնը», 22. X – 04. XI. 1920:

Հրաւէր Հայ Առեւտրականներու Փոխառութեան Համար. – «Ճակատամարտ», 27. VIII. 1920:

Պ. Խատիսեան Պոլսոյ մէջ. – «Ճակատամարտ», 27. VI. 1920:

Պ. Խատիսեան Այսօր կը հասնի. – «Ճակատամարտ», 07. IX. 1920:

Պ. Խատիսեան. – «Ժողովուրդի Ձայնը», 19. VI. – 02. VII. 1920:

Սերմնցու Փութացնենք Հայաստան. – «Վերջին Լուր», 06. III. 1922, 22. III. 1922:

Սերմնցուի Երկրորդ Առաքումը Հայաստան. – «Ժողովուրդի Ձայնը», 25. III. 1922:

Վաղուան Հանդիսութիւնները. – «Ճակատամարտ», 28. VIII. 1920:

«Վերջին Լուր», 27. VIII. 1920:

Փոխառութեան բացումը Կ. Պոլսոյ մէջ. – «Ճակատամարտ», 01. IX. 1920:

Փոխառութիւնը Գատըգիւղի մէջ. – «Ճակատամարտ», 29. IX. 1920:

Փոխառութիւնը Առնաուտգիւղի մէջ. – «Ճակատամարտ», 16. IX. 1920:

Փոխառութիւնը եւ Խասգիւղ Շուշան Հայուհեաց Միութիւն. – «Ճակատամարտ», 10. IX. 1920:

Փոխառութիւնը եւ Ճակատամարտը.– «Ճակատամարտ», 29. VIII. 1920:

Փոխառութիւնը եւ մեր որբերը. – «Առաւօտ», 06. IX. 1920:

Փոխառութիւնը եւ Պոլսոյ Հայ Միութիւնները. – «Ճակատամարտ», 07. IX. 1920:

Քաղաքական Կուսակցութիւններու Կոչը.– «Ճակատամարտ», 01. IX. 1920:

Օգնեցէք Հայաստանի, սերմնցու տուէք հայ մշակներուն. – «Ժողովուրդի Ձայնը», 17. II – 02. III. 1922:

Օգնութիւն Հայաստանին. – «Ժամանակ», 05 – 18. VI. 1919:

Օսմ. Առեւտրական Դրամատուն-Հայ Պանքա.– «Ժողովուրդի Ձայնը», 23. IV – 06. V. 1921:

ПОМОЩЬ КОНСТАНТИНОПОЛЬСКИХ АРМЯН ПЕРВОЙ РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ И СОВЕТСКОЙ АРМЕНИИ (1919 –1922 гг.)

СИЛЬВАРД МАЛХАСЯН
(Стамбул)

Р е з ю м е

Ключевые слова: константинопольские армяне, Первая Республика Армения, Советская Армения, периодические издания, Константинопольский Армянский патриархат, облигация госзайма.

Константинопольские армяне с первых же дней приветствовали провозглашение Первой Республики Армении в мае 1918 года, но не могли открыто выражать свои чувства. После официального признания Армянской Республики Парижской мирной конференцией 19 января 1920 года они гораздо свободнее проявляли свое воодушевление и начали участвовать в оказании помощи Родине. Помощь Армении организовывали религиозные лидеры трех церквей во главе Армянского Патриархата Турции. Проводились различные культурные мероприятия.

Откликаясь на призывы Республики Армения, армяне Константинополя были привержены поддержке правовых, экономических, военных, конституционных, профессиональных и культурных потребностей Родины. Вклад армян Константинополя был важен в организации облигаций госзайма Первой Республики Армения.

Сильвард Малхасян – соискатель Института истории НАН РА. Научные интересы: армянская община Константинополя 1918–1923 гг. Автор 2 монографий и 2 статей. ORCID:0000-0001-5152-8516.
silvamalhasyan @yahoo.com

ASSISTANCE OF THE ARMENIANS OF CONSTANTINOPLE TO THE FIRST REPUBLIC OF ARMENIA AND SOVIET ARMENIA (1919–1920)

SILVART MALHASYAN
(Istanbul)

S u m m a r y

Keywords: the Armenians of Constantinople, First Republic of Armenia, Soviet Armenia, periodicals, Armenian Patriarchate of Constantinople, government loan bond.

From the very first days, the Armenians of Constantinople welcomed the proclamation of the First Republic of Armenia in May 1918, but could not openly express their feelings. After the official recognition of the Armenian Republic by the Paris Peace Conference on January 19, 1920, they showed their enthusiasm much more freely and began to participate in helping their Motherland. The assistance to Armenia was organized by the religious leaders of three churches headed by the Armenian Patriarchate of Turkey. Various cultural events were held.

Responding to the appeals of the Republic of Armenia, the Armenians of Constantinople were committed to supporting the legal, economic, military, constitutional, professional and cultural needs of the Homeland. The contribution of the Armenians of Constantinople was important in the organization of the bonds of the state loan of the First Republic of Armenia.

Silvart Malhasyan – Applicant at the Institute of History of NAS RA. Scientific interests: The Armenian Community of Constantinople from 1918 to 1923. Author of 2 monographs and 2 articles. ORCID:0000-0001-5152-8516.
silvamalhasyan@yahoo.com